

1293

613.81

U-50

Ench
1889

613.81
и-50

ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԵԼՈՎԵՅԱՐԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԱ

ԱՊՈՒԱՐԻ և ԱՄՐ-ՎԱՅՈՎՈՒՅՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

Վայովույնի պատմութեան հայոց առաջնաւոր գործականութեան համար

1039.

2010

613.81

Վ. - 50

16251
մը

660

7-31

Թիֆլիսի զբավաճառանոցներում և
նուշի եղբ. Դադեանների զբախանութում
վաճառվում են

Կ. Կ. ՄԵԼԻՔ - ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Հետևեալ աշխատութիւնները.

1. Ղլցէ կնանոց պընը փեշակը. (Ղա-
րաբաղի բարբառով) 20 կ.
2. Բուսական աշխարհից անմշակ և
մշակուած ծառի կեանքը (ակզրունք
այգեկործութեան, պատկերներով) 30 կ.
3. Աւղեցոյց գործնական գինեգործու-
թեան (պատկերազարդ). . . . 60 կ.
4. Եօշվա Ղալին խէրն ու շառը (Ղա-
րաբաղի բարբառով Տմբլաչի Խաչանի
Փելիետոններից) պատկերով . . 45 կ.
առանց պատկերի 35 կ.
5. Փըրանք I հ. (մանկական). . . . 15 կ.
6. Ծխախոտը և իւր վնասները. 10 կ.
7. Ոգելից ըմպելիների վնասակարու-
թիւնը. 10 կ.

ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

1858

5/22
2/20
2/20

ԳՐԵՑ


ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ.

12.002

ՃՈՒՃԻ

Տպարան Ձայոց Հոգեւոր Յեղալենան:

1889



Հ. Ա. ԽՈՎՈՅԱՆ
Ա. ԽՈՎՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

၁၂၈၄၄ခုနှစ်ခုများမှာ ပေါ်လာသူ

Дозволено цензурою. 28 марта 1889 г.
Г. Тифлисъ

Типог. Шушин. Армян. Духовн. Вѣдомства.

ԱԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐԻ ԽՈՏԱԿԱՎՈՐՈՒՄ
ՎՆԱՍԱԿԱՐՈՒԻ ԹԻՒ ԱԾ

Մեծ ամօթ էր երիտասարդին և պատահուն մինչև անդամ շիրազու խանութ
մտնելը և այնտեղից առն համար խմիչք
առնելը ամօթ էր և պատուի խնդիլ շիրազու աղջիկ տալը կամ նրանից աղջիկ
ուղելը և այդ կատարվում էր 10—15
տարի արանից առաջ՝ ամբով վիճու

Այժմ վարագոյրը բացուած է, գիւնին լիմում են ամենքը սկսած արկուա
տարեկան երեխայից, որին ծնողները երսեթէ սիրելով, բերանան են լցնում, մինչեւ ծերը աղջկանից մինչև պառաւը, իսկ օղիւ այլ ողելից ըմպելիներ խմելուն բացի տղամասը դիմուի երեխ կանացը և կամաց կամաց վարժվում են:

Մենք ամենեին դէմ չենք նրան, որ մարդ իւր տանը, իւր շրջանի մէջ չափուոր գործածութեամբ, ինչպէտքունուած է, նախապատրաստում է ատամոքը ու կերածը մարդը մարդակը լուսութիւնը կամար խմելունը հայց առաջ առաջ կամաց վարժվում են:

գեղքի առթիւ մի քանի բաժակ կոնծեր լու, անմենեին ոչ բայց ցաւալի է տեսներ որ ծայրայեզութեամբ են հասցնում խմելը, անգիտանալով որ մի օր պիտի տուժեն դրա փոխարէն: Ո՞վ չէ տեսել թէ ինչպէս ինչը ներում քէֆ սիրողների շրջաններում Պօղուր ձգուում է խմելու մէջ յետ չմարդ Պետրոսից, դեռ եթէ կարելի է մի քանի բաժակ աւելի կոնծեր որ միւս օրը պարձենայ բազմութեան առաջ, որ ինքը լաւ խոր է, ո՞վ չէ տեսել որ շատերը մի ախտ են շնորհիւնց համար խմելը և ոչ գիշեր են հարցնում ոչ առաւօտ և ոչ երեկոյ: ո՞վ չգիտէ որ կան ախտութիւնը փարատելու համար խմողներ, ուրախութիւնը արտայացնելու համար խմողներ, մի փոքր ժամանակ անց կացնելու համար խմողներ, խմթիւնը խմողներ, բայց այս ամենը ոչինչ աւելի ցաւալի է տեսնել որ օղե-

մոլութիւնը աւելի ու աւելի է տարած-
վում մանաւանդ մեր հասարակ դասի մէջ.
օր օրի վերայ մենք տեսնում ենք թէ
ինչպէս շատանում են օղեաները քաղաք-
ներում և գիւղերում անգամ, ուր ա-
ռաջ այդ բանը չկար ինչպէս արբեցու-
թիւնը զօրաւոր քայլեր է անում, ինչպէս
մի շարք մարդիկ օր ցերեկ օղեաներում ըն-
կած՝ թողնում են այնտեղ իրենց դառն
քրտինքով աշխատած կոպէիները, թող-
նում նրա հետ իրենց ֆիզիքական և
մտաւոր ոյժը, օրորուելով ընկնում փո-
ղոցները և տանը՝ բացի ընտանիքի զա-
ւակների խաղաղութիւնը վրգովելը, շատ
անդամ սարսափելի եղեանագործութիւն-
ների պատճառ լինում:

Ընթերցողը աւելի որոշակի կաեսնէ
մեր հետևեալ սեսութիւնից, որ քաղում
ենք դր Ռիանից և պր. Ա. Ե. Խլենսկու
» Տրի Աձա « վերնագլուխ բրոշերից, թէ

ոգելից ըմպելիների գործածութիւնը մար-
դի ֆիզիքական կազմուածքի, մտաւոր
ընդունակութեան, և բարոյականութեան
վերայ ինչ ներգործութիւն ունի և թէ
արբեցութեան ախտը քանի քանի չա-
րիքներ է ստեղծում մի որ և է հասա-
րակութեան համար:

Բ.

Ճ-Օմ ճակ ո՞ւր արքանանը ք Նան
արքան Ոգելից ըմպելիներ ասեմով հասկա-
նում ենք ալքօլը, սպիրտը, օղին, բուր,
կոնկակը, պէսպէս լիկեօրները, դինին,
գարեջուրը պոլաերը և այլ խմիչքնե-
րը, որոնք իրենց մէջ շատ ու քիչ թըն-
դութիւն ունին:

Ալքօլը սպիրտը, օղին ստացվում են
խաղողից, թթից, հացահատիկներից և
այլ քաղցրութիւն պարունակող նիւթե-
րից, որոնց եփ են տալիս և նրանց մէջ
եղած շաքարը կամ քաղցրութիւնը տա-

քութեան միջոցաւ փոխարկում մի հետ
զուկի, որ նայելավ իւր թնդութեան աւ
տիճանին, կրում է ալք օօթ սպիրտ և
օղի անունները:

Մաքուր, անջրախառն աքօօլը ունի
100 աստիճան (գրադուս) թնդութիւն,
որ մի կատաղի թոյն է այդ գրաւթեամբ,
ջրի հետ հաւասարաշափ խառն՝ կաղ-
մում է գործածական օղին, իսկ 60-85
աստիճան թնդութեան ժամանակը սպիրտ
անունն ենք տալիս:

Օղու գործածութիւնը որ ընդհան-
րացած է ամեն տեղ, մարդի մարմի կաղ-
մութեան վերայ անում է աննկատելի կեր-
պով իւր վտանգաւոր ազդեցութիւնը: Նա
զրգում է թերանի ջղերը գաղում
(այրում) լեզուն, կատիկը տաքացնում է
սասամքսը, թափել տալիս մարսողական
հիւթը, որից և բացփում է խմողի ախոր-
ժակը օղին ստամքսի պատերից անցնելով

արիւնի մէջ, արտգացնում է նրա շքա-
նագալձութիւնը և թէ սրտի բարա-
խումբ:

Նատ օղի խմելուց արգենում է մարդ,
որով արագանում է նրա չնչառութիւնը
երեսն ու քիթը կարմրում են, աչքերը
արիւնով լցվում վղի ջղերը լարիում
մարդ այդ միջոցին արամագլուխում է շա-
տախօսութիւն անելու, իւր գաղտնիք-
ները բանալու, սիրում է երգել խօսել
գիտնական բաներից, երբեմն լաց է լի-
նում, թւում է իբր սիրահալուած, եթէ
վախկոտ է, քաջանում է և ընդհակառակը
արին՝ թուլանում: Նատեմը խմելուց դառ-
նում են բարկացկոտ կամ շատախօս և
կամ սաստիկ լռակաց, վիճում են, բղա-
ւում, հայՀոյում, կովում, արթեցողների
երեակացրութիւնը թէկ լարուած է լի-
նում, սակայն առողջ գատողութիւն չեն
ունենում և ամենահասարակ բանը

Հակառակ կերպով են հասկանում: Այն մարդիկ որ առողջ դրութեամբ միշտ տիսուր տրամադրութիւն ունին, արբենալուց ուրախանում են և ընդհակառակը ուրախները տիսում, որից հետեւմ է, որ թունդ խմբչքները կարող են փոխել ուղեղի գործողութիւնները: Թիժեւ արբեցութիւնը կարող է տեսել 15 բոպէից մինչև մի ժամի ապա սթափլում է խմողը և կրկին նախկին դրութեան մէջ է մտնում ամեն ինչ: Կատարեալ արբենալուց պատկերը փոխվում է, մարդի ձեռն ու ոտը գողդողում, տառանվում է և այլ ևս չէ հնազանդվում կամքին: Սիրտը խառնում ու թափիում է: Խօսում է անկապ, կցկառւր: աչքերը չովում են կամ նեղանում: դեմքը սպրդնում է մեռելի գցն սասանում: խոխում է և գիտակցութիւնից զըկվում, այնպէս որ այդ դրութեամբ եթէ նրան ծեծում:

են, ծակծկում նա չէ զգում և ոյժ չունի դիմադրելու: այդպէս արբաները հաղիք են 2—4 կամ 12 ժամից ուշքի դաշիս: Այն անձինք, որոնք որ և է տկարութիւն ունին թռերի, ուղեղի, որտի և չափից աւելի խմում են, հետեանքը լինում է ակքօնից թունաւորումն և շուտափոյթ մահ:

Մարդ մի քանի անգամ ողելից ըմբելի գործ ածելով անձնատուր է լինում նրան, նա դառնում է այնուչեալու մի անհրաժեշտ պահանջան և առփորաւ կան ժամը անցնելով՝ թուլանում է մարմնով, ոչ մի աշխատանքի ձեռք չէ տալիս, ընկնում է մի աեսակ անհոգութեան, մելամադնութեան մէջ և այդ դրութիւնից դուրս գալու համար նա կարիք է զգում կրկին խմելու և հետզհետէ չափը շատացնելու: Նթէ ողելից ըմբելիներ խմողները ժամանակին այդ ախ-

տիւառաջը չեն առնում, դրանից առան
ջանում է գինեմոլութիւն (զագոյ) ողբ
վերջանում է ուղեղի և նեարդերի խան
գարմամբ և կատարեալ խելացնորում
թեամբ: Գինեմոլութեան ժամանակ խան
գարվում են սահմաքար, թոքելը փայ-
ծաղը, թուլանում է և կապվում ախոր-
ժակը, առաւօտաները մաղձախառն սիրա
թափում, հոտում է շնչառութիւնը սիր-
ար ճարմարի պատում, երբեմն կատար
չիւանգութիւնը պտանում, որ անցնում
է թոքերի բորբոքման, իսկ արբեցողների
թոքերի բորբոքումը շատ անգամ մահով
է վերջանում կամ թոքախտի պէս եր-
կար պարբներ անբժշկելի դառնում:

Արբեցողները ընդունակ են դառ-
նում և ջրգողութեան (վօդեանկա), որից
ունետում են ոտները ջրով լրվում փորը
և վերջը սասաիկ տանջանքներով մոռ-
նում:

Արբեցողութիւնից առաջացած ողե-
ղիւն նեարդերի խանգարումը արտայցայտ-
վում է նախ մտածոր ընդունակութեան
թուլութեամբ, քնի կողցներով, ձանձրու-
թեամբ, բնութեան փոխուելով և աշխա-
տանքից փախչելով, ապա երեսում է մկա-
նունքների գողդուց, թուլութիւն, ան-
կանոն շարժուածք, ականջների թշթը-
շոց, աչքափափութիւն, ձեռք ու տաքի
գողդուց, մկանութիւն, զառանցանք, ո-
րից և հետեւում է կաթուածւ ինկայնո-
րութիւն և շուտափոյթ ու ժոսդառ լի-
նելու մահան Ահա մշտիսն արբեցողի
պատկերը: Ուստի ու ուստի գոյն նորոյ
ու առաջնորդ նոր ուստի գոյն նորոյ
գոյն նոր ուստի գոյն նորոյ գոյն նորոյ
Սակայն միայն լրանկը չեն ողելից
ըմակելների ու ածւ վնասները պիճակա-
զրական տեղեկութիւնները ցոյց են առ-
լիս որ Անդիսացում արբին 50,000 հոգի

են մեանում ոգելց ըմպելիներից, Միացեալ
Նահանգներում, ուր 1828 թուին 300,000-
ից տւելարբեցող է եղել տարին 37,500
հոգի են մեռել և այն երիտասարդ հա-
սակում Ռուսաստան տարին մեռնում են
աւելի քան 100,000 հոգի, այսպէս և
միւս երկիրներում տարեկան մի քանի
տասնեակ հազար հոգի են փշանում:
Արդարեւ Բայլլաքը իրաւունք ունէր ասե-
լու «թէ մարդիկ ժամանիում են խօլե-
րայից, բայց օղին նրանից պակաս վարա-
կիչ ախտ չէ»:

Յիշաւի մենք ասրսափում ենք, ելք
ըսում ենք թէ այս ինչ տեղը խօլերան
մտաւ, մի տասը քսան զոհ տարաւ, հա-
զար մի միջոցներ ենք դործ դնում ա-
հագին, գումարներ վատնում առաջը տո-
նկըւ, բայց սառնասրատութեամբ նայում
ենք երբ մի աէրութեան մէջ հազարաւոր
մարդիկ են կոտորվում արբեցութիւնից:

Արբեցութեան ախտի վերաց է կա-
րել վեր ի վերց նայել արբեցութիւնը
մի տեսակ ժառանգական հիւանդութիւն
է, որ անցնում է հօրից պրուն և հա-
սարակութեան համար մի վատնգառը
անվամ պատրաստում:

Վաղուց արգէն հաստատում է որ
գժութիւնը և խելքի ակարութիւնները
մ.ձ մասամբ առաջանում են ողելց բի-
պելիների չափազանց գործածութիւնից:

Անզլիայում օրինակ խելագարների
կեր արբեցողներից են, Ֆրանսիայում խե-
լագարութիւնը քննող բժիշկների փառձե-
րից յայտնի է, որ խելագարների 100-ին
18-ը խմողներ են և որչափ տարած գումէ-
ողելց ըմպելիների գործածութիւնը այն
քան և շատանում է դժերի թիւը: Հենց
դրա համար ել իրաւամբ օգեառնը
համարում են մի տեղ, ուր փողով
գժութիւն են ծախում:

Արքեցութիւնից անձնասպանութիւն գործելը ևս հետզհետէ շատանում է. օրինակ 1848 թուին Ֆրանսիայում անձնասպանութիւն են գործել 141 հոդի, այն ինչ 1866-ին՝ 401. Պարիզում 72 մեռնողներից մինը արքեցութիւնից անձնասպան է, Լոնդոնում 175-ին մի, Նիւ-Յօրկում 172-ին մի, Վենետիկում 160-ին մի, Եվրոպայում 57-ին մի:

Ոգեցից ըմպելիները բացի մարդի առողջութեան և ընդունակութեան խանդարելը, փշացնում են և նրա բարքն ու վարքը, այնպէս որ նրա մէջ զանազան մոլից ցանկութիւններ և զգացումներ են յղանում առանց չափի, առանց որ և է սանձի:

Խմիչքի անձնատուր եղած անձի համար չկայ ոչ ընտանիք, ոչ պարտականութիւն, ոչ աշխատանք և ոչ ապադայ. նրա հազար մեռած են սէր, բարեկամու-

թիւն գիտութիւն, բնութեան գեղեցկութիւն: Նա հետպհետէ կորցնում է աշխատելու կարողութիւնը, իւր վարկը, դասարկապուտութեան մէջ է ընկնում և իւր ախտին յագուրդ տապլու համար գողութեան, մինչև իսկ մարդասպանութեան ձեռնամուխ լինում: 001 Ա զանձի 32/95

Արքեցողը մի տեսակ կատաղի բնութիւն է սպանում, որ գրգռվում է ամենանշնուր գէպքից, ջարդում, փշում, ձեռքն ընկած իրը, խփում, վերառութում, սպանում, առանց խղճահարուելու, առանց ամաշելու: Քրա օրինակնելը շատունինք թէ պատմութեան մէջ և թէ առօրեայ կեանքում:

Անդլեայում քրէական յանցաւորների 314-ը արքեցողներն են. Ամերիկայում տասն տասնուայ ընթացքում ոսկելից ըմպելիները փշացրել են 300 հազար հոգի, 100 հազար մանուկներ աղքատանոցը

Ընդհանրապէս կարելի է ասել, որ
ոչ մի խմբչք այնպէս չէ օգնում մարդի,
ինչպէս մաքուր ջուրը. Փորձը ցցյ է տա-
լիս, որ ջուր գործածողները պեկի տ-
ռողջ կազմուածքը ունին, աւելի երկարա-
կեաց են և նրանց ախորժակը միշտ
տեղն է. նայեցէք մեր գիւղացիներին,
Գաղստանում ապրող լեռնականներին,
ինչպէս պնդակազմ են ու առողջ, չնայե-
լով իրենց աստանելի աշխատութեան,
իրենց չարքաշ կեանքին. նրանց բայց
ջուրը հազիւ է պատահում տարին մի
քանի անգամ զինու համ տանելը դրանց
կերակուրը, ինչպէս յայանի է, շատ պարզ
է և այն պէսպէս խորածիկները չկան, որ
փոխ առ փոխ անցնում են հարուստների
սեղանի վերայ, բայց դրանք ունին մա-
քուր օդ, մի խսկական կերակուր, որին
չպէտք է արհամարհել կանոնաւոր կեանք
և աշխատութիւն, որոնք առողջութեան

գլխաւոր պայմաններն են:

Քաղաքներում ապրող մշակը, որ
առօրեայ ծանր աշխատութեամբ կորցը
նում էիւր կենսական օյժերը, կերակուրը
վստ լինելուն հետ շնչած օդն ևս մա-
քուր չէ, մանաւանդ եթէ զործարաննե-
րում բանւոր է, արդեօք կարող է միայն
ջրով բաւականանալ:

Առողջ երիտասարդը կամ նիշար,
թոյլ արիւնը պահան անձը, այն մարդը
որ ֆիզիքապէս կամ մտաւորապէս զբաղ-
վում է և այն լարուած աշխատութեամբ,
արդեօք պէտք չունի կաղդուրիչ խմիչքի,
որ կարողանայ զրգուել, պահպանել և
վերանորոգել իւր օյժերը:

Այս ամեն դէպքերում միայն մա-
քուր ջուրը ընտրելի է, եթէ չկայ այդ,
այն ժամանակ ջրախառն զինին:

Գինու չափաւոր զործածութիւնը
կերակուրի վերայ օպտակար է իւր պայը:

ոող և կաղդուրիչ յատկութեամբ, բայց
չափը անցնել կարծելով թէ ամեն դէպ-
քում կպահէ իւր այդ կաղդուրող յատ-
կութիւնը, սխալ է: Գինու, գարեջրի և
այլ թէթէ խմիչքների չափաւոր գործա-
ծութիւնը արդյոք օգնում է մարտողու-
թեան, ինչու որ զրգում են դրանք
ստամբսի հիւթը, որ դուրս գալով
խառնվում է կերակրի հետ և նրանի դիւ-
րամնարս շնորհմ, բայց չափից մի փոքր
աւելին, ընդհակառակն, կամ կանդնեցնում
արդելում է նրան, կամ չափազանց դուրս
բերում: առաջին դէպքում մարտողու-
թեան ժամանակամիջոցը երկարում է
կամ անկատար մնում մարտողութիւնը,
երկրորդ դէպքում՝ այն է ստամբսային
հիւթի չափազանց հանելովը՝ պատճառ
լինում առաւօտը քնից զարթնելուց մի
անտանելի թուլութեան, որ վերջանում
է սիրտ թափելով: Չափից աւելի խմելը

կապում է տիսորդակը և արգելք լինում
քիչ ուստեղու և կերածը անկանոն մար-
սելու, որի հետեանքը լինում է մարմնի
նիհարելք:

Կան մարգիկ, որ ընդհակառակը
խմելուց գերանում են, այդ պատահում
է նրանից, որ օղին կամ սպիրալ բռնում
է արեան թթուածինի տեղը, որի յատ-
կութիւնն է մարմնի մէջ հաւաքուած
կերակրի իւղային մասելը հալեցնել
թթուածինի բացակայութեամբ, մարդս
ամբարում է մի աւելորդ բեռն, որ ոչ
թէ առողջութեան նշան է, ինչպէս կար-
ծում են, այլ կերածը իւրացնելու ան-
կառաբութեան կամ հիւանդութեան
հետեանք, ինչու որ ձարպը կամ իւղային
մասերը հետ հետէ տարածվում են բո-
լոր գործարանների մէջ, ինչպէս թոքերի,
սրաի, նեարգերի, խանդաբում նրանց
գործողութիւնը և պատճառ լինում

ջրային և այլ հիւանդութիւններից ինչ-
պէս յիշեցինք փոքր առաջ: Այսու
նշագրութեան արժանի է և ողոգե-
լից ըմպելիների գործածութեան ժամա-
նակը: Եատ վտանգաւոր է օրինակ անօ-
թի օղի խմելը՝ բաստարկ ստամոքսը՝ ա-
ւելի արագութեամբ: Է իրեն մէջ ծծում
սպիրալի թոյնը և այդ դրագողու ու այ-
լող խմիչքը ազատօրէն նելութունում դա-
տարկ գործարանի պատերի գերայ: Այ-
բժիշկ իրաւացի ասած է: Վկերակութից
առաջ ոգելից խմիչքը ընդունելը մի և
նոյն է թէ պտամոքու մի կեղծ բանա-
լիով բանալ: Անզրբանակց մանրան
Խմիչքների մէջ թէ անոբարար կ
թէ կազդուրիչ կարելի է համարել միայն
զարեջուրը, նու լաւ է մանաւանդ ակար
մարդի համար: Ինչպէս օղին, նոյնպէս և
զինին ու գողիջուրը վնասակար են գեր
շատարիւն, սրտի և թոքերի հիւանդու

թիւն ունեցաղ անձանց:

Քոլոր խմիճքները առանց բացառութեան առհասապակ վաստակար են երեխայոց: Արդեօք նգելից ըմպելիների գործածութիւնը ցրառութեան դէմ պաշտպանուելու միջոց կարո՞ղ է լինել ինչ պէս ընդունուած է:

Ոգելից ըմպելիները թէև ակլըռում արարացնում են պատի բարախումը, արեան շրջանադարձութիւնը զսգուում ուղեղը և նեարդերը, բարձրացնում մարմի ջերմութիւնը, բայց քիչ յետոյ ընդհակառակն է պատահում, թուլանում է թէ արեան շրջանադարձութիւնը, թէ պատի բարախումը և թէ մարմի ջերմութիւնը այդ հիման վերայ սգելից ըմպելիները համարվում են ջերմութիւնը նուազեցնաղ միջոցներ և գործ են գըռ վում արիֆի և թափերի բորբոքման և այլ միջոցներում, երբ հարկ կայ մարմի ջեր-

մութիւնը նուազեցնել ուստի սխալ է այն կարծիքը, որ մարդիկ իրենց մարմնը տաքացնելու համար ցուրտ եղանակին դիմում են ոգելից ըմպելիներին:

Ամենօրեայ փորձերը ցըյց են տալիս որ օղի խմողները աւելի քիչ են դիմումում ցրտին քան չխմողները և յաճախ արբեցողներն են, որ ցրտից փեամնում, սառչում են: Պատերազմների ժամանակ դիմուած է, որ օղի խմող դիմուողները աւելի շուտ են յոգնում և քիչ դիմացկան են, քան չխմողները:

Զուիցերիայի սառչապատճերում պատող ճանապարհորդները ոգելից ըմպելիները վաստակար են համարում ճմէութեռներից անցնելու ժամանակի, դրանք վերցնում են միայն թեթև դինի: Այս պէս և անօգուտ են համարուած քեւոներում ճանապարհորդողների համար և նըսպէս ցրտութեան դէմ, Կոյնպէս և շո-

գերից պաշտպանութելու համար, ողելից
ըմպելիներ գողծածելու վասակարու-
թիւնը ամեն տեղ և ամեն կլիմայի առկ
հաստատած է բժիշկներից:
այսու մը ըստ զանոնի առնուածած
անդր մը զգ վեճեա. զանոնից քո զա
մանա և զանոնից մաց միայց և առ
նուածայ համառօտ տեսութիւնից ար-
դէն պարզ է ընթերցողին, թէ ողելից
ըմպելիների գողծածութիւնը քանի քա-
նի չարիքներ է ստեղծում մի որ և է
հասարակութեան համար, քանի քանի
չարիքների պատճառ լինում, որ կտար-
վում է ամեն օր մեր աչքի առաջ մեր
շուրջը, կամ կարգում ենք դանց մասին
լրագիներում բայց ի՞նչ ենք անում մեր,
ի՞նչ է անում հասարակութիւնը:
Ամեն բանիմաց խոստովանում է որ
հասարակութեան շահը պատիւր պա-
հանջում է զբա առաջը առնել, չարիքը

փոքրացնել բայց թէ ի՞նչ միջոցներով,
այդ մասին լուռում է նա, լուռում է և հա-
սարակութիւնը ինքը: Ամեն տեղ, ամեն
տէրութիւն, արբեցողների համար պատ-
ժական օրէնքներ է սահմանել այդ նո-
րութիւն չէ, վաղուց արգէն թունածառա-
նում խստիւ արգելուած էր երիտասարդու-
ներին ու կանանց դիմի խմել:

Սողոնի օրէնքը մահուամբ պատ-
ժում էր այն արքոնամին, որ աբբած գուրս
էր զալիս ժողովրդի մէջ:

Հուօմում մարդը կնկանը կարող էր
սպանել եթէ նա արբենար:

Ֆրանսիայում օրէնք կար որ պատ-
ջին անգամ արբեցողին բանատիւմ էին
և չոր հացի. ու ջրի կապում երկրուց
անգամ արբեցողին գանակուծում էին,
երբարդ անգամ հասարակութեան առաջ
ձեծում և եթէ դրանով չուղղուէր, ոտի
բայթ մասը կորում էին, անամօթ հրա-

առարտակում և քշում երկրից: Ղուրանի
օրէնքով դատապարտվում են մահմեդա-
կանները գինի կամ այլ խմիչք ընդու-
նելու:

Միայնակալ-նաշանգներում արբած-
ների համար առանձին ապաստանարան-
ներ կան, ուր փակում են նրանց, որպէս
զի չար օրինակ ընթին հասարակութեան,
չմնան թէ իրենց և թէ ուրիշներին և
այնուհեղ կամաց կամաց թողնեն իրենց
ախտը:

Կան և այնպիսի աեղեր, ուր փա-
կում են արբածներին և նրանց մէջ
գէպի ոգելից ըմպելիները զզուանք յա-
րացանելու մտքով, ամեն կերակուրի կամ
խմիչքի մէջ սպիրտ են խառնում:

Սակայն չնայելով պատժական օրէնք-
ների խստութեան, չնայելով հաղար ու
մի ձեռնարկած միջոցներին, որ դորձա-
գրում են, չնայելով ակցիզի բարձրացնե-


լուն, որ ոգելից ըմպելիները բարեգոր-
ծուին և թէ հասարակ դասին անմատ-
չելի լինեն, այնուամենայնիւ յուսացած
բարեփոխութիւնը չմտաւ, ինչու որ
չար իքը ժողովս ե ան վարք
ու բարքին նրա տգիտութեան
մէջն ե, որ բոնց հետ և պիտի
մաքառել:

Հասկանալի է ուրեմն որ ժողովրդա-
կան կրթութիւնը ու դասարարակու-
թիւնը բարձրացնելով, առողջապահու-
թեան պայմանները հասկացնելով միայն
կարելի է այդ ախտի առաջն առնել և
դրա համար հասարակութիւնը ինքը
պիտի հոգաց և ոչ թէ միայն պատժա-
կան օրէնքներին թողնէ:

Կարծիք չկայ որ այդ բանի համար
աւելի պարտականութիւն կայ մեր հա-
սարակական գործիքների վերայ, ինպէս
քահանաների, բժիշկների, ուսուցիչների

և մամուլի, որոնք պիտի պարզեն ժողովրեան այն բոլոր չարիքը, որ առաջանում է ոգելից ըմպելիների գործածութիւնից և մանաւանդ աշխատեն ըստ Դիւմայի «Պարմեցնել մարդի մէջ բարյականութեան պատասխանաւութեան զգացումը, պատուի ճանաչումը, սէր դէպի ընտանիքը, հայրենասիլութեան գաղափարը և Աստուծոյ երկիւղը»:

Այդպիսով միայն կարելի է սպառ-
նացող վասնզից փրկել մի ժողովուրդ,
որ գեր զլորման առաջին քայլերն է
անոռմ:



Պատրիաստ են տպագրութեան համար

1. Ուղեցոյց գործնական շերամապահութեան (ընդարձակ ձեռնարկ):
2. Գերբենդի այգեգործութիւնն ու զինեգործութիւնը:
3. Վազը և նրա մշակութիւնը
(ընդարձակ ձեռնարկ):

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0071740



MS. A. 1.1. 80th

